

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՆՎԻՐՎԱԾ ԳԱՆՁԵՐԸ

*Պերո էր հայերեն գիր հեատել: Այս հեատր-
քը Աստուած մեր քահանայապետին մովսի-
սանման զատականին չգրուաւ, այլ իրեն ստա-
րոնանման աջակցին՝ Ս. Մեսրոպայ:*

Ն. ՂԵՎՈՆԴ ԱԽԵԱՆՆԻ¹

Հայ հոգևոր բանաստեղծության մի ուրույն տեսակն են գանձերը: Նրանցով սկսվեց հայ բանաստեղծության զարգացման նոր շրջանը, որն իր հերթին պայմանավորված էր հայկական վերածնության և դասական միջնադարի առաջ բերած նոր աշխարհընկալմամբ և վերջինիս թելադրած գրական նոր ըմբռնումներով:

Այս ստեղծագործությունները գանձեր են անվանվում հետևյալ պատճառով: Միջնադարում ընդունված կարգով չափածո շատ գործեր վերնագրվում և բերվում էին իրենց սկզբնատողով և կամ էլ անգամ առաջին բառով, ինչպես, օրինակ, Կոմիտաս Կաթողիկոսի՝ Հոփսիսիմյանց Աշանավոր շարականն է հայտնի «Անձինք մոփրեալք» և կամ էլ «Անձինք», իսկ Ներսես Շնորհալու՝ Վարդանանց մվիրված շարականը՝ սկզբնատողային «Նորահրաշ պսակաւոր» անվամբ:

Միջնադարյան բանաստեղծություններում մասնակրոստիքնային ընդունված սկզբունքով լուրաքանչյուր տան սկզբնատողի առաջին բառերը կազմում էին մի ծայրակապ, որը հիմնականում ներկայացնում էր տվյալ ստեղծագործության հեղինակի անունը:

Ինչպես հայտնի է, առաջին գանձերի հեղինակը Գրիգոր Նարեկացին է: Ծայրակապային ընդունված այս սկզբունքով Նարեկացու այս ստեղծագործությունների առաջին տան առաջին տողի առաջին բառը պետք է սկսվեր Գ-ով, որպեսզի հաջորդող տներով կազմվեր ԳՐԻԳՈՐ ծայրակապը: Զարմանալի հոգևոր մի խորհրդով և կամ էլ ասես կանխազգալով, որ իր ընտրած սկզբնաբառով են կնքվելու հայ բանաստեղծության այս ժանրի ստեղծագործությունները, «Գրիգոր» ծայրակապի Գ-ի համար մեծ բանաստեղծը քանիցս իր այս գործերը սկսել է Գանձ բառով, որի համար էլ հիշյալ ժանրով գրված գործերը սկսել են անվանվել «գանձ», իսկ ըստ եկեղեցական-տոնական և ծիսական կանոնների ի մի հավաքված գանձերի ժողովածուն՝ «Գանձարան»²:

Ծարականների մեան, գանձերը ևս գրվել են եկեղեցական տոների և արարողություն-

¹ Ն. Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեսաց Հայոց, հր. Ա. Վանսիկի, 1869, էջ 323:

² Գանձարան ժողովածուի և գանձերի մասին, որպես գրական ժանր, տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Ա. Բյուշկերյանի, Երևան, 1981 թ., էջ 21-51:

ների ժամանակ կատարվելու համար: Նույն այս պատճառով, ինչպես որ շարականները ավելի շատ բերված են ոչ թե ըստ հեղինակային շարքերի, այլ Ծարակնոցում ցրված են եկեղեցական տարբեր տոների կանոնների ներքո, այնպես էլ զանձերը բերվում են ոչ թե այս կամ այն հեղինակի ստեղծագործությունների շարքում, այլ Գանձարաններում՝ այն տոնի կանոնի ներքո, որին միջոցով է տվյալ զանձը: Ի տարբերություն, սակայն, շարականների և Ծարակնոցի, զանձերը և Գանձարան ժողովածուն անհամեմատ քիչ են ուսումնասիրված և հրատարակված, որը բացատրվում է մի քանի պատճառներով:

Նախ, որ առաջին շարականագիրներն են եղել Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը, և որպես գրական ժանր այն կապվում է մեր մատենագրության դասական շրջանի և վերջինիս մշակավոր դեմքերի հետ, ուստի և, բնականաբար, շարականները գտնվել են հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Երկրորդ՝ Գանձարան ժողովածուն, Ծարակնոցի մասն անխառնելի լինելով եկեղեցական տոների և ծեսերի կատարման համար, այնուամենայնիվ, բուն եկեղեցական արարողությունների մաս չկազմեց, այլ որպես առավել մոտ շրջանի երևույթ, ավելի շատ մնաց որպես տվյալ տոն, և և ծեսերի խորհուրդը վեր հանող հոգևոր-գրական երևույթ: Ուստի, եթե «Ծարակնոցը», «Մաշտոցը», «Ժամագիրքը», «Պատարագամատուցը», «Խորհրդատետրը» և «Մաշտոց» ծիսարանը, ունենալով եկեղեցական կիրառություն, քանիցս հրատարակվել և վերահրատարակվել են և նույն ծիսական առումով ճիշտ կատարվելու համար ենթարկվել համապատասխան եկեղեցագիտական քննության, ապա Գանձարանները քանի որ եկեղեցածիսական կանոնական այս ժողովածուների շարքում չեն եղել, ուստի և նրանց հրատարակության եկեղեցակիրառական անհրաժեշտությունը չի եղել:

Նույն այս հանգամանքն անհամեմատ դժվարացրել է զանձերի և Գանձարանների ուսումնասիրությունը հետևյալ պատճառով. վերը մշակված եկեղեցածիսական ժողովածուների միջև առկա տարբերությունները պայմանավորված են եղել Տոնացույցի և ծեսերի՝ դարերի ընթացքում կատարված փոփոխություններով և որոշ չափով էլ՝ ձեռագրերի ընդօրինակությունների ժամանակ առաջ եկող գրչագրական տարբերակվածներով, ուստի կանոնական մասն ժողովածուները որոշակի դասակարգման և խմբավորման են ենթարկվում: Այսինքն՝ կանոնական ժողովածուներում փոփոխությունները պայմանավորված են կանոնի փոփոխությամբ: Վիճակը, սակայն, միանգամայն այլ է զանձերի և Գանձարանի պարագայում:

Չունենալով վերոմշակ ժողովածուների կանոնացվածությունը՝ նրանց փոփոխությունները պայմանավորված են եղել ոչ միայն եկեղեցական կանոնի, այլև ժամանակի գրական ըմբռնումների փոփոխությամբ:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ ոչ միայն շարականներն էին կանոնացված ստեղծագործություններ, այլև նրանց հեղինակներն էին մկրագործված անուններ մեր եկեղեցական կյանքում և մատենագրությունում, ուստի շարականների ընդօրինակության ժամանակ գրիչները իրենց չէին կարող թույլ տալ ցուցաբերել այնպիսի ազատություն, ինչպիսին զանձերի պարագայում էր: Այսինքն՝ եթե շարականների դեպքում գործում էր հոգևոր-գրական եկեղեցական կանոնացված ավանդույթը, ապա զանձերն ընդօրինակելիս գրիչները դրանք հարաբերում էին իրենց ապրած ժամանակի, եկեղեցական խնդիրնե-

րի և ազգային ակնկալիքների հետ՝ կատարելով համապատասխան փոփոխություններ և հավելումներ: Ընդօրինակությունից ընդօրինակություն կատարվող այս փոփոխություններն էլ անհամեմատ դժվարացնում և խճողում են զանձների բուն բնագրի վերականգնումը, ինչպես և՛ այդ բնագրերի քննությունը:

Հատկանշական է, որ հայկական տպագրության սկզբնավորումից ի վեր հրատարակվել ու արժեվորվել են գլխավորաբար Գրիգոր Նարեկացու և Ներսես Օհրորհալու զանձերը: Այս հանգամանքը առաջին հերթին պայմանավորված է այս հեղինակների ունեցած հոշակով: Միաժամանակ նրանք ներկայացնում են հայ զանձագրության առաջին շրջանը, և նրանց անվան հետ է կապվում և Գանձարան ժողովածուի սկզբնավորումն ու ձևավորումը: Հայ զանձագրության առաջին այս շրջանի համակողմանի քննությունը Նարեկացու և Օհրորհալու տաղերի ու զանձերի գիտաքննական բնագրերի հրատարակությամբ 1980-ական թթ. իրականացրեց Մատենադարանի աշխատակից Արմինե Քյոշկերյանը³: Գանձարան ժողովածուի և զանձերի՝ որպես գրական ժանր, զարգացման երկրորդ փուլը կապվում է Գևորգ Սկևազու և հատկապես Մխիթար Այրիվանեցու անվան հետ:

Գարեգին Հովսեփյանը, արժեվորելով Մխիթար Այրիվանեցու գրական ժառանգությունը և ցավ հայտնելով զանձերի ոչ միայն չուսումնասիրված, այլև անգամ հրատարակված չլինելու համար, գրում է. «Գանձերը, տարաբախտաբար, մինչև այժմ անուշադրության են մատնված, թեև նրանց ուսումնասիրությունը կօգնե և մեր միջնադարյան բանաստեղծության հասկացողությանը: Նրանք կարևոր դեր են կատարել մեր անցյալում՝ կապված լինելով տերունական և սրբոց տոների և եկեղեցական արարողությունների հետ»⁴:

Հայ ձեռագրային աշխարհի հմուտ գիտակը Գանձարանների խմբագրությունների մասին գրում է. «Այսպիսի զանձերի (և հոգևոր երգերի) ժողովածուների երկու իրարից տարբեր խմբագրություններ յայտնի են մեզ. մեկը հին եւ աւելի արժեքատու, հազուադիս, միւսը Գրիգոր Խլաթեցու ձեռքով հաւաքած եւ կաֆաներով ևս ճոխացրած, յետագայում յաւելումներով ուրիշների կողմից»⁵:

Հովսեփյանի մատնանշած հավելումները ըստ էության ներկայացնում են ԺԵ դարում կատարված ավելացումները, որով Գանձարանը ավելի է ճոխանում նորանոր միավորներով՝ ներկայացնելով Հայոց Եկեղեցու տոնական ողջ ընթացքը:

Գանձարանների քննությունը վկայում է, որ իրար հաջորդող այս երեք խմբագրությունների առաջ գալը պայմանավորված էր այս ժողովածուն ժամանակի գրական և ազգային-եկեղեցական ըմբռնումներին համահունչ դարձնելու ձգտմամբ, ինչպես նաև աստիճանական ընթացքով նրանում ներառելու Հայոց Եկեղեցու տոներին և մի շարք կարևոր ծեսերին վերաբերվող զանձերը, որով յուրաքանչյուր տոն ստանում է զանձատաղային իր միավորը:

Գանձարանների զարգացման այս ընթացքը ևս մի գուգահետ է գծում շարականների

³ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանձեր, աշխարհասիրությանը Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981: Ներսես Օհրորհալի, Տաղեր և զանձեր, աշխարհասիրությանը Ա. Քյոշկերյանի, Երևան, 1987:

⁴ Գարեգին արքեպ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, Նորագույն արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 3:

⁵ Նույն փնդում:

անցած ճանապարհի հետ: Ինչպես որ եկեղեցական երկու գլխավոր տոներն են Ս. Ծնունդը և Ս. Հարությունը ու նրանց միջև ընկած Մեծի Պահոց շրջանը, այնպես էլ մեր հնագույն՝ Սահակ-Մեսրոպյան շարականները վերաբերվում են տոնական այս ժամանակահատվածին, իսկ նրանց հաջորդող դարերի շարականագիրները նորանոր շարականներով ամբողջացրել են տարեկան տոնական այս ընթացքը:

Նույն այս հանգամանքով է բացատրվում և Ներսես Օմորհալու այդքան մեծ թվով շարականներ, գանձեր և տաղեր գրելը: Օմորհալի Հայրապետը, ձեռնամուխ լինելով եկեղեցական արարողությունների և ժամակարգության ամբողջացմանը, մի շարք տոների համար, որոնք տվյալ օրվա շարականը չունեին, համապատասխան այդ շարականներն է գրում:

Համամյան ձևով գանձերի պարագայում, երբ թեմատիկ քննության ենք ենթարկում Նարեկացու գանձերը, ապա տեսնում ենք, որ դրանք հիմնականում նվիրված են եկեղեցական գլխավոր տոներին, և հաջորդող շրջանի հեղինակներն էլ նպատակային ձևով աշխատում են գանձեր և տաղեր գրել այն տոների համար, որոնք չունեին իրենց համապատասխան գանձային և տաղային միավորները: Այսինքն, տարբեր հեղինակների կողմից այս ստեղծագործությունների գրությունը պայմանավորված էր ոչ միայն նրանց գրական-թեմատիկ նախասիրություններով, այլև թելադրված էր Ժարակնոցը և Գանձարան ժողովածուն համապատասխան միավորներով լրացնելով:

Այս հանգամանքը առավել ցայտուն ձևով է երևում Գանձարանի առաջին խմբագրության առավել հին օրինակներում, որոնցում ըստ տոնական ընթացքի զետեղված յուրաքանչյուր կանոնի ներքո հիմնականում մեկ միավոր է: Հետագայում, երբ տվյալ տոնի թեմայով մեր գանձեր և տաղեր են գրվում, արդեն տվյալ տոնի կանոնի ներքո զետեղվում են տվյալ տոնին նվիրված այս ստեղծագործությունները: Այս պարագայում իսկ, սակայն, կարելի է վերականգնել Գանձարանի հին խմբագրությունը, քանի որ մեր հավելված միավորների խորագրում նշվում է՝ «այլ տաղ», «այլ գանձ» և կամ էլ՝ «յայլմէ ասացեալ»: Համաբնութ ճշումներով գործերը եթե հանենք, ապա վերստին կունենանք Գանձարանի առաջին խմբագրությունը:

Գանձարանի առաջին և երկրորդ խմբագրությունների համեմատությունը միաժամանակ վկայում է, որ մի շարք միավորներ դուրս են մնացել և տեղ չեն գտել Գանձարանի երկրորդ խմբագրությունում և հաջորդող դարերի ընդօրինակություններում: Այս հանգամանքը չի կարելի բացատրել միայն նրանով, որ աստիճանաբար միևնույն տոնին նվիրված մի քանի ստեղծագործություններ են գրվել, և ամհրաժեշտ է դարձել ընտրություն կատարել դրանց միջև: Մի շարք կանոնների՝ ներքո երբեմն բերված են մինչև հինգ-վեց ստեղծագործություններ, այնինչ այլ կանոնների պարագայում երկու-երեք գործերից մեկը դուրս է թողնվել և կամ էլ եղած անգամ մեկ ստեղծագործությունը փոխարինվել է մի մեր գրված գործով: Ասվածը լիովին վերաբերվում է և Սրբոց Թարգմանչաց նվիրված գանձերին:

Որքան էլ զարմանալի է, մինչև ԺԳ դարը Թարգմանչաց նվիրված որևէ գանձ հայտնի չէ, թեև, ինչպես վկայում են Կորյունը և Խորենացին, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի հիշատակների տոնը սկսել է կատարվել նրանց վախճանմանը հաջորդող տարիներից:

Անգամ Ներսես Օմորհալին, որը Օարակնոցը և Գանձարանը հարստացրել է տասնյակ գանձերով և շարականներով, Թարգմանչաց նվիրված որևէ ստեղծագործություն չի գրել, բացառությամբ «Վիպասանութեան»⁶ Գրերի Գյուտին նվիրված հատվածը, ինչպես նաև Դավիթ Ամհաղթի՝ Խաչի ճառի մեկնության Թարգմանչաց նվիրված հատվածը:

Թարգմանչաց «Որք զարդարեցին տնօրինաբար» շարականը գրել է ԺԳ դարի նշանավոր մատենագիր Վարդան Արևելցին:

Նկատելի է այն օրինաչափությունը, որ Թարգմանչաց նվիրված ներբողները և տարբեր երկերի ներբողական հատվածները սկսում են հանդես գալ ԺԲ ու առավել ևս ԺԳ դարերից: Եթե մի՞նչ այդ թիմնականում Գրերի Գյուտի մասին պատմական տեղեկություններ են հաղորդվում տարբեր պատմիչների գործերում, ապա այս շրջանում գրվում են Կարապետ Սասնեցու (ԺԱ-ԺԲ դդ.) նշանավոր ներբողյանը⁷, Նույն Վարդան Արևելցու ներբողյանը⁸, Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» Գրերի Գյուտին և Սրբոց Թարգմանչաց վերաբերվող ներբողական ծավալուն հատվածը⁹:

Նույն այս դարում են գրվել Թարգմանչաց նվիրված միջնադարյան երեք գանձերից երկուսը՝ Գևորգ Սկևռացու «Գանձ Սրբոց Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ» և Մխիթար Այրիվանեցու «Գանձ Սրբոց Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ»:

Գանձարանի թիվ խմբագրությունը ամբողջացել է ԺԴ դարում: Գանձարանների ձեռագրային քննությունը ցույց է տալիս, որ ԺԴ դարի այս ժողովածուների մի խմբում Թարգմանչաց կանոնի ներքո բերվում է Գևորգ Սկևռացու, իսկ մյուսներում՝ Մխիթար Այրիվանեցու գանձը: Այսպես, հնագույն գանձարան-տաղարաններից երկուսում՝ Փարիզի Ազգային գրադարանի հմր. հմր. 79 և 80 ձեռագրերում (որոնցից առաջինի գանձարանային մասը գրվել է ԺԴ դարում, իսկ երկրորդ ձեռագիրը՝ 1381 թ.), Թարգմանչաց կանոնի տակ բերված է Գևորգ Սկևռացու գանձը¹⁰: Այս գանձն է գտնվում նաև Երևանի Մատենադարանի հմր. 7785 Գանձարանում¹¹, որն, ինչպես գրում է Ա. Բյոշկեյանը, ընդօրինակվել է 1370-1380-ական թթ. Սուրխաթում (Ղրիմ)¹²:

Գևորգ Սկևռացին Թարգմանչաց գանձը սկսում է վաղարշապատի Կաթողիկեի կառուցման ներբողմամբ: Ինչպես որ Սահակ Զորափորեցի Կաթողիկոսն էր Հայոց Դարձի և Մայր Տաճարի կառուցման համար գրում, թե այստեղից մեզ ծագեց Հայաստան աշխարհի փրկության լույսը, այնպես էլ Գևորգ Սկևռացին է վաղարշապատի Կաթողիկեն համարում այդ լույսը: Ինչպես եկեղեցին սկսվում է որպես քարեղեն շինվածք և ավարտվում որ-

⁶ Ներսես Շնորհալի, Շարագրություն իտմերական վիպասանութեամբ սակս Հայկազանցն սեռի և Արշակունեաց զարմի, աշխ. Մ. Մկրտչյան, Երևան, 1981, էջ 95-98:

⁷ Տե՛ս Ներբողական պարմագրաբար ասացեալ սրբազան նախկուպոսի և վարդապետի Կարապետի Սասնեցոյ, Վաղարշապատ, 1897, 74 էջ:

⁸ Նորին Վարդանայ վարդապետի ասացեալ բան գովևարի պարմագրաբար վասն Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ և այլոց Թարգմանչացն, «Բանբեր Մարենադարանի», 1964, № 7, էջ 377-397 (աշխ. Փ. Անթարյանի):

⁹ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պարմություն Հայոց, աշխ. Կ. Ա. Մխիթ-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 25-30:

¹⁰ Տե՛ս Փարիզի Ազգային գրադարան, ձևագ. հմր. 79, 149ա-154բ և հմր. 80, 372ա-374բ:

¹¹ Տե՛ս Երևանի Մարենադարան, ձևագ. հմր. 7785, 117ա-120ա:

¹² Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Երևան, 1981, էջ 52:

պես հոգևոր տաճար, այնպես էլ այստեղ ասվում է, որ Կաթողիկե եկեղեցին հիմնարկեց Սուրբ Լուսավորիչը, իսկ վայելչապես այն պնդագարդեցին «Մեծն Թարգմանիչը»¹³:

Այս համեմատությունը ցույց է տալիս քրիստոնեության զարգացման և ազգայնացման ընթացքը Դ-Ե դարերում: Ամհրաժեշտ է նշել, որ մեծն զուգահեռը և Թարգմանչաց գործի՝ որպես Ս. Գրիգորի հիմնարկած եկեղեցու գեղազարդություն ամվանելը այնուհետև չենք որպես Ս. Գրիգորի հիմնարկած եկեղեցու գեղազարդություն ամվանելը: Որ այս զանգվածի գտնում հաջորդող շրջանի հեղինակների ստեղծագործություններում: Որ այս զանգվածի գրության ժամանակ Թարգմանչաց տոմը առանձնակի շուքով է նշվել, երևում է զանգվածի բարեխոսական հայցվածի (խնդրվածքի) այն տողերից, որոնցում հեղինակը Թարգմանչաց համար գրում է «յորոց մեծափառ սուրբ յիշատակի» (նրանց մեծափառ սուրբ հիշատակը):

Եկեղեցական տոնացույցում Թարգմանչաց տոմի «Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթովի, Դաթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացուն և Ներսիսի Կլայեցուն» ամվանումը խորհրդանշական ձևով իրար է կապում հայ դպրության դարերը: Թեև տոմի այս ամվանումը ձևավորվել է հաջորդող մի քանի դարերի ընթացքում, սակայն այս զանգվածն արդեն արտացոլվել է Թարգմանչաց հաջորդականության և ժառանգորդության գաղափարը: Ինչպես առաջին տան հայցվածում է ասվում:

Հեր Քրիստոս պահպանիչ աշակերտացս երջանիկ Սրբոց Թարգմանչաց:

Երկրորդ տան մեջ վերստին շեշտվում է, որ Գրերի Գյուտը Հայոց աշխարհի համար դարձավ մի նոր լուսավորություն: Այս գաղափարը գեղարվեստորեն արտահայտվում է Երգ երգոցի «Ահա ձմեռն անց... ծաղիկք երևեցան յերկրի մերում... որթ մեր ծաղկեալք ետուն զհոտս իրեանց» (Բ 11-13) խոսքերի հետևողությամբ:

Ձմեռն զմացեալ ամհաստութեան, ժամանեաց զարումն աստուածգիտութեան,
Բոխեալ քեզ ծաղիկ առաքինութեան և հոտ քեզ բուրեալ միշտ կենդանութեան:

Այսպիսով, մինչ Գրերի Գյուտը ընկած շրջանը ամհավատության ձմեռն էր, որը ցրվում է Գյուտի ծաղկաբեր զարման՝ աստվածգիտության գալով:

Ս. Գրիգորի միջոցով Հայոց աշխարհի լուսավորության գործը Ս. Մեսրոպով ավարտելը եթե առաջին տան մեջ ներկայացվում էր Կաթողիկե եկեղեցու Ս. Գրիգորի հիմնարկմամբ և այնուհետև Թարգմանչաց միջոցով ամբողջացմամբ, ապա երկրորդ տան մեջ այն արտահայտվում է սերմանվող խոսքի պատկերով, ուր Սուրբ Գրիգորի քարոզության համար ասվում է:

*Որոյ արտասուաբ բանն սերմանեալ, հնձեալ դիզեցաւ ի Սուրբ Թարգմանչացն,
Յորոց և կասեալ սրբեալ, շեղչեցաւ զանձեալ ի մառանդս սուրբ գրանոցաց:*

¹³ Փարիզի Ազգային գրադարան, ձևագ. հմր. 80, 148բ:

Այսպիսով, Լուսավորիչը իր քարոզությանը աստվածային խոսքը սերմանեց, որը Գրեքի Գյուտի առաջ բերած կրթական շարժմամբ հնչեցրին և իրենց կողմից ստեղծված հայ դպրության երկերում ամբարեցին Սուրբ Թարգմանիչները:

Հաջորդող տներում Գրեքի Գյուտը հարաբերելով հոգևոր երկնային խորհուրդների հետ, Սկևռացին այնուհետև համառոտ ներկայացնում է Գրեքի Գյուտի պատմությունը, ապա թվարկում Ս. Սահակի և Ս. Մեսրոպի աշակերտներին՝ այս թվարկումը խորհրդանշական կերպով սկսելով Մովսես Խորենացուց, ում անվանում է առաջին աշակերտը Ս. Սահակի և Ս. Մեսրոպի: Գևորգ Սկևռացին ինքը քերականության և գրչության արվեստի մեկնիչ և տեսաբան լինելով, Մովսես Խորենացուն մեծարում է ոչ թե որպես Հայոց պատմահոր, այլ որպես առաջին քերթողի, ինչպես որ Խորենացուն են անվանել մաս Մովսես Քերթող, թեև բանասիրությունը հետագայում, իհարկե, ապացուցեց, որ Մովսես Քերթողը այլ հեղինակ է, Մովսես Խորենացին՝ այլ:

Ինչպես Սկևռացին է գրում Պատմահոր համար՝

*Ինչպես առաջին մեզ հայր քերթողաց պայծառն Մովսէս այն Խորենացին,
Նախմին աշակերտ Սրբոյն Մեսրովպայ ի քերըս բայից հզար քան ըզնա:*

Դիոնիսիոս Թրակացու քերականությունից եկող ըմբռնմամբ Սկևռացին «քերականություն» բառը բացատրում է «քերել» բառով, որպես բայի քերումն՝ «ի քերըս բայից»: Այնուհետև հաջորդաբար հիշում է Հովսեփ Պաղնացուն, Եզնիկ Կողբացուն, Դավիթ Ամհալթին, Կորյունին և քերականաց դասին:

Թարգմանչաց դասին կենդանի ներկայություն համարելով մեր ազգային եկեղեցական կյանքում, Թարգմանչաց աշակերտներին անվանում է նրանց «ստույգ աշակերտք», որոնց էլ իրենց հերթին աշակերտել են և իրենք: Այսպիսով, ինչպես որ քահանայական իշխանությունը Քրիստոսից փոխանցվեց առաքյալներին, ապա Եկեղեցու միջոցով շարունակվեց առաքելական հաջորդությամբ, այնպես էլ վարդապետների միջոցով Թարգմանչաց գործն ու առաքելությունն է շարունակվում:

Հայտնի է, որ Մխիթար Այրիվանեցու Գանձարանի գրությունից հարյուր տարի անց՝ 1386 թ. Գրիգոր Խլաթեցին եղել է Այրիվանքում, ծանոթացել Այրիվանեցու գանձերին և ապա հիմնովին վերախմբագրել Գանձարան ժողովածուն՝ շատ հին գանձեր փոխարինելով նորերով, իսկ շատ գանձեր էլ տրոհելով և տանելով տարբեր կանոնների տակ:

Ինչպես նշում է Էլեոնորա Հարությունյանը Մխիթար Այրիվանեցուն նվիրված իր ուսումնասիրության մեջ, սկզբնապես Այրիվանեցու գանձերը անհատական մի Գանձարան են եղել՝ իրենց ընդհանուր ծայրակապով, և հետո Գրիգոր Խլաթեցին է, որ դրանք ներառել է ընդհանուր Գանձարան ժողովածուում¹⁴:

Այրիվանեցու գանձերի այն օրինակը, որը տեսել է Գրիգոր Խլաթեցին, ունեցել է չափածո հիշատակարան, ուր ասվել է. «ԻԱ, գանձ կա՝ տէր Մխիթարայ Այրիվանեցուն ի գիրքս և Բ երգս նորկերտ գրոց և պատկերաց սրբոց. ՉԼԵ (1286 թ.)»¹⁵:

¹⁴ Տե՛ս Է. Հարությունյան, Մխիթար Այրիվանեցի, Երևան, 1986, էջ 148-149:

¹⁵ Տե՛ս Գարեգին արքեպս. Նովսենցյան, Մխիթար Այրիվանեցի, Նորագիտ պաճանագրություն և երկեր, էջ 6:

Մխիթար Այրիվանեցու չափածո հիշատակարանի վերջում խլաթեցին ավելացրել է հետևյալ տողերը. «Տէր Մխիթարն ի ՉԼԵ թընին ասացեալ էր զհյր բանսն և Գրիգոր վարդապետն ի ՊԼԶ (1387 թ.) թվին հանդիպեցաւ մորա բանինցն. ՊԼԶ»¹⁶:

Գանձարանի՝ խլաթեցու խմբագրությունից հետո Թարգմանչաց կանոնի մերձու Սկևռացու գանձի փոխարեն արդեն Այրիվանեցու գանձն է դրվում:

Ամհրաժեշտ է սակայն մշտել, որ մինչ խլաթեցու խմբագրությունն էլ հին գանձարանների մի մասում այս կանոնի մերձու, ինչպես ասացինք, Այրիվանեցու գանձն է եղել: Այսպես, վենետիկի Մխիթարյանների ԺԴ դարի երեք Գանձարաններից երկուսում՝ իրենց հնությամբ երկրորդ և երրորդ գանձարաններում, գրված համապատասխանաբար 1394 և 1396 թթ., կա Թարգմանչաց կանոնը, և երկուսում էլ Այրիվանեցու գանձն է¹⁷:

Այրիվանեցու՝ Թարգմանչաց մկիրված գանձն ենք գտնում և Երևանի Մատենադարանի ԺԴ դարի հետևյալ ձեռագրերում. հմր. 3540, 106ա-109բ (1286, 1408 թթ.), հմր. 5328, 115ա-118ա (ԺԴ դ.), հմր. 4273, 62ա-65բ (1396 թ.), հմր. 8251, 106ա-109ա (ԺԴ դ.), հմր. 4068, 271ա-275բ (ԺԴ դ.):

Գևորգ Սկևռացու այս գանձը այնուհետև Այրիվանեցու գանձով է փոխարինվել, որովհետև վերջինս առավել պատմական հիմքի վրա էր խարսխված և ավելի շատ էր հարաբերվում գրության ժամանակի և հաջորդող դարերի ընթացքում հայության ունեցած ձգտումների և ակնկալիքների հետ:

Քանի որ Հայոց գրերը խորենացու վկայությամբ աստվածային տեսիլով են տրվել, մեր մատենագրության մեջ համարվել են հոգևոր արարչություն, ուստի արարչագործության հետ զուգահեռով Այրիվանեցին իր գանձը սկսում է չորս տարրերի մասին գրելով, այնուհետև ներկայացնում Գրերի Գյուտը ըստ մեր պատմիչների վկայությունների, ապա անցնում դրանց ազգային-հոգևոր խորհրդի վերհանմանը ու արժեքորմանը:

Սկևռացին Գրերի Գյուտը եթե հարաբերում էր Ս. Գրիգորի քարոզության հետ, ապա Այրիվանեցին հոգևոր լուսավորության և փրկագործության բուն ակունքից սկսելով այս գանձի երկրորդ տան սկզբում մախ գրում է Փրկչի մարդեղացման, ապա առաքելական քարոզության մասին, որն այնուհետև հաջորդական փոխանցմամբ հասավ մինչև Ս. Սահակ Հայրապետը, ում գահակալության շրջանում տրվեցին հայոց գրերը:

Քրիստոս մարմնացեալ, քարոզ առաքեալ, քանոն մեզ եղեալ,
Թաղէոս եկեալ, յԱրտագ վկայեալ, Սանդուխտ սպանեալ,
Եւ Բարդողիմէի, ի բարմ վկայեալ, փոքրը հաւտ թողեալ,
Սուրբ Գրիգոր յայտնեալ, զՏրդատ մըկրտեալ, Յոհաննէս կոչեալ,
Մեր հարքն որ ընտրեալ, յոյն գրով վարեալ, ասորով վարժեալ,
Սահակ սրբասնեալ, կաթողիկոս լեալ, ամս յիսուն ճըգնեալ:

Կորյունի հետևողությամբ Այրիվանեցին Մեսրոպ Մաշտոցին համեմատում է Մովսես Մարգարեի հետ, որ ինչպես Մովսեսը Աստծուց ստացավ քարեղեն տախտակները, այն-

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տե՛ս Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի ձեռք. հմր. 382, 50ա, ձեռք. հմր. 1672, 37ա:

պես էլ Ս. Մեարոպը Աստվածային նույն Աջով՝ հայոց գրերը¹⁸:

Մեր միջնադարյան մատենագրությունում յուրովի են իմաստավորվել Ներսես Մեծի և Սահակ Պարթևի տեսիլները: Ամեն մի դարաշրջան յուրովի է մեկնաբանել Ս. Սահակի տեսիլը և հատկապես տեսիլում նկարագրվող մագաղաթի ոսկյա գրերի ջնջված տողերը: Այս տեսիլի կատարման առաջին արտահայտությունը համարվել է Վարդանանց մահատակությունը: Մագաղաթի ոսկյա գրերը քանի որ ըստ տեսիլի մեկնաբանության խորհրդանշանում են Ս. Գրիգորի տոհմից Հայոց Հայրապետական Աթոռին վերընձնուղվելով մտող գահակալներին, ուստի տեսիլի այդ հատվածի կատարումը համարվեց Պահլավունյաց տոհմի ներկայացուցիչների՝ կաթողիկոսական գահին բազմելը, քանի որ, համաձայն ավանդության, նրանք սերում էին Ս. Գրիգորի տոհմից:

Հետաքրքրական է, որ այս գանձերը ընդօրինակող խմբագիր-գրիչները ասես չբավականանալով Սահակ Պարթևի տեսիլի՝ Այրիվանեցու բանաստեղծական մեկնաբանությունից, իրենց կողմից կատարել են նոր հավելումներ՝ առավել ազգային-հայրենասիրական շունչ հաղորդելով այս գանձին:

Այսպես, Ս. Սահակի տեսիլում հիշվում են և սեղանի շուրջը խմբված երիտասարդները, որոնք այնուհետև լուսավոր թևերով պատվելով թռչում և շրջապատում են սեղանը:

Այրիվանեցին տեսիլի այս տողերը բերում է առանց մեկնաբանության՝ պարզապես բանաստեղծական թվարկմամբ գրելով.

Տղայք մորահասակ, սկուտեղին դիմակ, թևքն հրեղինակ¹⁹:

Այս գանձի մի շարք ընդօրինակություններում այս տողից հետո հանդիպում է հետևյալ հավելում-մեկնաբանությունը.

Որ էր մշամակ, սըրթոց մահատակ, Վարդանանցն լըստակ
Եւ այլ բազմյարինակ, իրաց մըշամակ, յետին ժամանակ²⁰:

Այս հավելում-մեկնաբանության առաջին տողը տեսիլի հիշյալ հատվածն ուղղակիորեն կապում է Վարդանանց հետ, իսկ հաջորդ տողը տեսիլի հետ է հարաբերում հաջորդող դարերի հայոց բոլոր մահատակներին:

Ազգային-հոգևոր այս շեշտադրումները առավել են խորանում գանձի բարեխոսական հատվածը կազմող «Զարթիր ողորմած» սկզբնատողով տնում:

Գանձի մախավերջին տունը ներկայացնում է Ս. Սահակի և Ս. Մեարոպի վախճանումը: Հետաքրքիր է, որ Այրիվանեցին Կորյունի հետևողությամբ Ս. Սահակի վախճանման օրը չի մշում, այլ դարձյալ ասում է ամսավերջին. «Ի մասսարդի, ի վերջին արի»:

Եթե Գևորգ Սկևռացու գանձը սկսվում էր Վաղարշապատի Սուրբ Կաթողիկեով, ապա

¹⁸ Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, Գանձեր և Տաղեր, աշխատասիրությամբ Է. Հարությունյանի, Երևան, 2005, էջ 114:

¹⁹ Մխիթար Այրիվանեցի, Գանձեր և տաղեր, էջ 115:

²⁰ Նույն տեղում:

Այրիվանեցին էլ իր գանձն է ավարտում Մայր Տաճարին մվիրված վերջին տնով՝ գրելով.

Ով գմբեթաշէն, Սուրբ Գրիգորաշէն, դու աստուածաշէն:

Բուն գանձում զարմանալիորեն որևէ ակնարկ չկա Լուսավորչի տեսլի մասին, սակայն գանձի մի շարք խմբագրություններում այս տողերի վերաշարադրմամբ լրացված է այս բացը և համաձայն Լուսավորչի տեսլիի ասվում է.

Ուռամբ ոսկեղէն, հարեալ ի հզարէն, միայնոյ փրկչէն:

Բուն գանձում այսպիսով թեև Լուսավորչի տեսլիի մասին ուղղակի հիշատակություն չկա, սակայն վերջինիս հետևողությամբ բանաստեղծորեն այն միտքն է արտահայտվում, որ Միածնի աստվածային լույսով էջջով աստվածության հուրն է բնակվում այս տաճարում, ինչպես որ աստվածության հուրը Մովսեսին երևաց անկեզ մորենիով.

Ի քեզ բնակեալ էն, հուրն ի մորենին, վառեալն ի թղփէն:

Ինչպես վկայում են ձեռագրային տվյալները, Գանձարանի երրորդ խմբագրությունը կատարվել է ԺԵ դարի սկզբում: Այս խմբագրությունից հետո Թարգմանչաց կանոնում կատարվում է երկու էական հավելում: Առաջին՝ Այրիվանեցու գանձին զուգահեռ առանձին մի կանոնով հանդես է գալիս Առաքել Բաղիշեցու (1380-1454 թթ.) «Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ» գանձը, ինչպես նաև Թարգմանչաց բուն կանոնի՝ Այրիվանեցու գանձը զանձարանային ընդունված կանոնով հավելվում է տաղային և փոխային հետևյալ երեք միավորներով՝ «Եկայք զուարճացեալք պայծառացոյք տաւնիս», «Սուրբ վարդապետն մեր ընտրեալ» և «Արդ երկոքին սոքա ընտրեալ»:

Նրանցից առաջինը Ներսես Օճորհալու՝ Առաքելոց մվիրված տաղի փոխն է, որը ԺԴ դարի գանձարաններում մույն ձևով բերվում է Առաքելոց կանոնի ներքո, որպես այդ կանոնի փոխ: Այն այսպես է Երևանի Մատենադարանի № 7785 ձեռագրում (469աբ), ինչպես նաև Վենետիկի Մխիթարյանների 1394 թ. գրված հմր. 382 ձեռագրում (50ա) և 1396 թ. գրված հմր. 1672 ձեռագրում (37ա):

ԺԵ դարի սկզբից, սակայն, այս փոխը արդեն բերվում է Թարգմանչաց կանոնի ներքո և դրվում որպես վերջինիս փոխ: Այսպես, Վենետիկի Մխիթարյանների 1425 թ. գրված Գանձարանում Թարգմանչաց կանոնի ներքո Այրիվանեցու գանձին հաջորդում են այս և «Սուրբ վարդապետքն մեր ընտրեալ» գործերը: Այս երկու միավորները կան նաև Երևանի Մատենադարանի 1466 թ. գրված հմր. 425 Գանձարանում (95ա-96բ): Այս երկրորդ՝ «Սուրբ վարդապետքն մեր ընտրեալ» փոխն էլ վերցված է Օճորհալու «Վիպասանությունից»: Մասնակի փոփոխություններով այն համապատասխանում է «Վիպասանութեան» 900-914 տողերին: ԺԵ դարից սկսած Գանձարաններում, որպես Թարգմանչաց կանոնի մաս, բերվում է նաև Օճորհալու «Վիպասանութեան» 920-942 տողերն ընդգրկող հատվածը՝ «Արդ երկոքին սոքա ընտրեալ» սկզբնատողով:

Ինչ վերաբերվում է Առաքել Բաղիշեցու գանձին, անհրաժեշտ է նշել, որ այն գրվել է ոչ թե բուն Գանձարանի համար որպես նոր միավոր, այլ սկզբնապես մաս է կազմել նրա անհատական Գանձարանին: Ինչպես նշում է Ա. Քյոշկերյանը, Բաղիշեցին սկզբնապես հեղինակային անհատական մի Գանձարան է կազմել ըստ տոնական ընթացքի՝ Ծննդյան ութօրեքից մինչև Ավագ տոները, այն ավարտելով ծիսական գանձերով²¹:

Այս շարքում Սրբոց Թարգմանչաց մկրված գանձը ևս գտնվում է իր ընդունված տեղում՝ Բուն Բարեկենդանից առաջ և նախորդում է Ղևոնդյանց տոնին: Այն ունի հետևյալ սկսվածքը.

Այրհնեալ ես Հայր Սուրբ անքրննական,
Գովեալ անճառ ծընունդ հայրական...

Այս գանձը ևս սկսվում է Արարչագործությամբ և գալիս-հանգում է Հայոց գրերի արարմանը:

Այստեղ արդեն հստակորեն շեշտվում է Գրերի Գյուտի ազգային նշանակությունը, թե մինչ Թարգմանիչները հայերը գրում էին հունարեն գրով, որովհետև չունեին «գիր ի հայ բառէն»: Բաղիշեցին ևս համառոտակի հիշում է Ս. Սահակի տեսիլը, սակայն առանց որևէ հոգևոր-գեղարվեստական վերամեկնաբանման:

Բաղիշեցին ևս Մեսրոպ Մաշտոցին համեմատում է Մովսես մարգարեի հետ.

Երևեցաւ Մեսրոպ ցանկալին
Համանման մեծին Մովսէսին²²:

Այստեղ ևս Գրերի Գյուտը և թարգմանչաց շարժումը համարվում է Հայոց աշխարհի երկրորդ լուսավորությունը, որը կատարվեց Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ձեռամբ.

Եւ լըծակցեալ Մեծի Սահակին
Սուրբն Մեսրոպ քաջն այն ռաբունին,
Զազգըս հայոց նոր նորոգեցին,
Որպէս յաւորն Լուսաւորչին:

Ս. Սահակ-Ս. Մեսրոպ շարունակական զուգահեռն ենք գտնում գանձի «Առաքել» ծայրակապի Լ-ով սկսվող ներբողական տնում: Կարծում ենք, որ պատահաբար չի ընտրվել հենց այս տունը: Լ տնագլխով այստեղ ըստ երևույթին ակնարկվել է նաև նրանց լուսավորիչ լինելը:

Ս. Սահակի և Ս. Մեսրոպի գործակցությունը բանաստեղծորեն ներկայացվել է իրար

²¹ Այս մասին տե՛ս Ա. Քյոշկերյան, Մի նորահայտ անհատական Գանձարան, «Էջմիածին», 1970, Զ-Է, էջ 98-103, և «Առաքել վարդապետ Բաղիշեցու նորահայտ Գանձարանի կյուրերի ցանկը՝ ըստ Մաշտոցի անվան Մաքսիմալարանի հմր. 6527 ձևագրի», «Էջմիածին», 1970, Թ, էջ 50-55:

²² Մաշտոցի անվան Մաքսիմալարան, ձև. հմր. 424, 184բ և հմր. 6527, 51ա:

հաջորդող զույգ տողերի առաջին տողով Ս. Սահակին և երկրորդով Ս. Մեսրոպին բնորոշելով, ինչպես օրինակ.

Սահակ ցուցող զմարդկան զապագայն,
 Մեսրոպ եղեալ մայր իմաստութեան:
 Սահակ հովի հաւտիս տիրական,
 Մեսրոպ տեսուչ թորգումեան:

12 զույգ տողերով այսպես բնորոշվում են Ս. Սահակը և Ս. Մեսրոպը: Ընդ որում, ընդհանուր ներքողական տողերը ուղղակի կամ անուղղակի ձևով հարաբերվում են նրանց կյանքի և գործունեության հետ, ինչպես վերը բերված տողերի առաջին զույգի առաջին տողով ակնարկվում է Ս. Սահակի նշանավոր տեսիլը:

Գրերի Գլուտով հայ եկեղեցական մատենագրության և ընդհանրապես եկեղեցական արարողությունների հայագգի և հայալեզու դառնալն է ակնարկվում հետևյալ տողերով.

Աջ Հըզարին գիր մեզ պարգևեալ,
 Անծախելի պըտողով առլըցեալ,
 Զեկեղեցիս հայոց կերակրեալ:

Այս գանձն ունի իր տաղը²³: Եթե բուն գանձում Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը բնորոշվում էին իրարահաջորդ տողերով, ապա «Անպատմելի շնորհաբ լըցեալ» սկսվածքով տաղում նույնը կատարվում է իրարահաջորդ տներում, արդեն Ս. Մեսրոպ-Ս. Սահակ հերթագայությամբ:

Տիպաբանական և կառուցվածքային մամն ընդհանրությունները վկայում են, որ այս երեք հեղինակների գանձերով արդեն ձևավորվում է Սրբոց Թարգմանչաց մվիրված հոգևոր-գրական այն կանոնը, որին որպես գրական կաղապարի դիմելու և որի շրջանակում ստեղծագործելու էին և հաջորդող շրջանի հեղինակները՝ գրական ամենատարբեր ժանրերի գործերում պատկերելով Մեսրոպ Մաշտոցին ու Սահակ Պարթևին և ընդհանրապես Սրբոց Թարգմանչաց:

²³ Տե՛ս Մաշտոցի անվան Մալոնադարան, ձևագ. հմր. 6527, 55ա-56ա: